

Ո. ԻՆՆՐԻ

ՋՈՆ ՏՈՄ ՓՈՔԻ ԱՐՁԸ



ԴԵՏՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1934

83


891.549-93

23 JAN 2018

Ո. ՇԵՆՐԻ

Զ Ո Ն Տ Ո Մ Փ Ո Ք Ր Ա Ր Զ Ը

Թարգմանություն յեկ մշակում
Ե. ԳՈՒԼԻՎԱՆՈՎԱՅԻ
ՆԿԱՐՆԵՐԸ Պ. ԱԼՅԱԿՐԻՆՍԿՈՒ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՍԵՐԵՎԱՆ 1934

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանճյան
Լեզվի խմբագիր՝ Ա. Առտաշյան
Ռուս. բարձր՝ Վ. Ստեփանյան
Սրբագրիչ՝ Մ. Գեվորգյան
Պետհրատի տպարան

Գլավիտա. 8613, հրատ. 3046, պատվեր 1064, տիրաժ 3000


Հանձնված և արտադրություն 1 հուլիսի 1934 թ.
Ստորաշրջված և արտադրություն 17 հուլիսի 1934 թ.



1-347199

Ձոն Տոմ Փոքր Արջը հնդիկ էր, Չիրոկի
ցեղից. նա իմ հին բարեկամն էր դեռ այն ժա-
մանակ, յերբ յես ապրում էյի հնդկական
տերիտորիայում: Նա Արևելյան նահանգների
կոլեջներից մեկի սաներից էր, վորոնք բավա-
կան մեծ հաջողությամբ հնդիկներին սովո-
րեցնում են ոգավել թավայից, վորպեսզի ի-
րենց գոհերին լավ կարմրացնեն խարույկի
վրա: Յեթե Ձոն Տոմն անգլիացի լիներ, նա
կհամարվեր պղնձի նման կարմիր, բայց վոր-
պես հնդիկ, նա ինձ թվում էր ամենասպիտակ
մարդը, վորին յես յերբեիցե հանդիպել եմ:
Յեվ ճիշտն ասած, այս չիրոկացին ամենա-
փոքր ցանկությունն անգամ չուներ վերադառ-
նալու իր սկզբնական դրությանը:

Մենք Ձոն Տոմի հետ բավական մտերմա-
ցանք և վորոշեցինք զբաղվել դեղորայքի ար-
տադրությամբ: Մենք ցանկանում էյինք մեր
խարդախությանը տալ որինական բնույթ,
հանգիստ զբաղվել դրանով, առիթ չտալ վոս-
տիկանություն հիմար հետապնդմանն ու ավե-
լի խոչորվածությունների ազահություն զար-
գացմանը: Մենք ուժեղեցինք մոտ հինգ հարյուր
դոլար խնայողություն և տենչում էյինք մե-



Ժացնել այդ գումարը, ինչպես անում են բոլոր
կանոնավոր կապիտալիստները:

Յեւ յայդպես, մենք ձեռք բերինք մեր
նախագիծը, վոր պետք է այնքան համոզեցու-
ցիչ լիներ, վորքան վոսկու հանքերի նախա-
գիծը և այնքան շահավետ, վորքան կարող եր
լինել բարեգործական վիճակախաղը:

Մի ամիս չանցած կարմիր ճանապար-
հորդական Փուրզոնին լծած մի զույգ արա-
զավազ ձիեր, մենք արդեն թափառում էյինք
Կանգասում: Ձոն տոմը Գոնի-Մոնե-Տու ցեղի
առաջնորդն եր, մի նշանավոր և բարեսիրտ
հնդկացի բժիշկ, իսկ միտեր Պիտերսը (այդ
յես էյի)—գործերի կառավարիչը և ձեռնար-
կության փայտերը:

Փող ձեռք բերելու համար մենք գտանք
բազմաթիվ հրաշալի միջոցներ: Այդ միջոցնե-
րից մեկը կախարդական ոճառն եր, վորով
կարելի յեր մաքրել հագուստների վրա յեղած
յուղի հետքերը և քսակներից թոցնել վոս-
կին: Յերկրորդը խոտաբույսերից պատրաս-
տած հնդկական մոզական զեզ եր՝ «Վոո-
դատ» անունով: Այս զեզը հայտնագործել եր
մեծ վողին, վորին յերազում տեսել էյին
նրա սիրելի բժիշկը և շէրի յերկու մատա-
կարարներ՝ Չիկագոյում—Գարբիտ և Չիլ-
բերչտայն: Կար կանգասցիների գրպաններից
փող դուրս կորզելու նաև ազատ սիստեմ, վորը
բազմաթիվ կրպակների բերում եր բավակա-
նաչափ վնաս: Մտածեցեք միայն. մի զույգ

կից, լավեց մի ձայն, վորը նման եր չըթոցի:
Չոն Տոմը հայհոյելով իր կրծքից դուրս հա-
նեց փոքրիկ գնդակը, վոր մտել եր անրակի
մոտ: Հետո մտավ թփերի մեջ, վորտեղից
լավեց այդ հրախաղության ձայնը, և վերա-
դարձավ իր յետևից քարչ տալով իննը տարե-
կան մի փոքրիկ թավչազգեստ տղայի:

— Այ դու պղպղակ, —ասում է Չոն
Տոմը, —ինչ մտածեցիր, վոր կրակեցիր քո
հորիցը¹⁾. դա կարող եր մտնել վորևե մեկի
աչքը: Այստեղ արի, Ջեֆ, —գիմում է նա
ինձ, —հետևիք կերակրին, մի թողնիր այրվի,
մինչև այս սատանային հարց ու փորձ անենք:

— Վախկոտ կարմրամորթ, —ասում է
տղան, —կարծես խոսում է սիրած գրքի
հետ. —ապա համարձակվիր այրել ինձ խա-
րույկի վրա, սպիտակամորթները կհանեն քո
յերեսից այդ կարմրությունը, ինչպես... Դե,
հիմա բաց թողեք ինձ... թե չե մայրիկիս
կասեմ...

Չոն Տոմը տղային նստեցնում է ծալովի
նստարանի վրա և կանգնում նրա դիմաց:

— Դե, պատասխանիր մեծ առաջնոր-
դին, —ասում է նա, —ինչի՞ համար էյիր դու
ուզում կրակել քեռի Չոնի վրա: Ի՞նչ է, դու-
յե չգիտեսյիր, վոր ատրճանակը լիքն եր:

— Իսկ դուք հնդի՞կ եք, —հարցնում է

1) Հորիցը հեռու խփող թնդանոթ է:

տղան, նայելով Չոն Տոմի վրայի յեղջերույի
մորթունն ու արծվի փետուրներին:

— Այո, —ասում է Չոն Տոմը:

— Այ, հենց դրա համար, —պատասխա-
նում է տղան, վոտքերը շարժելով:

— Ո՛ր, ո՛ր, —ասում է Չոն Տոմը: —Յես
տեսնում եմ, վոր դու վրիժառու տղա յես:
Յեվ դու յերգվել ես յերկիրը մաքրել վայրենի
կարմրամորթներից, այդպե՞ս է, տղաս:

Փոքրիկ տղան անվճռականորեն շարժում
է գլուխը և միանգամից դառնում մտածկոտ
ու տխուր: Նա չէր ցանկանում, վոր դադանիքն
իմացվեր, մինչև վոր գոնե մի պարծենկոտ
կարմրամորթ կընկներ իր խաղալիք-հրացա-
նից:

— Եյ պղպղակ, այժմ ասա, վորտե՞ղ են
քո պայթող փամփուշտները, —ասում է Չոն
Տոմը. —վո՞րտեղ ես դու ապրում: Քո մայրի-
կը յերևի արդեն անհանգստանում է, վոր
դու այսքան յերկար ժամանակ ըացակայում
ես: Ասա ինձ՝ վորտե՞ղ է ձեր տունը, և յես
քեզ կտանեմ:

Տղան մոռայվեց:

— Դուք ինձնից վոչինչ չեք իմանա: Մեր
տունը հազար-հազար կիլոմետր հեռու յե այս-
տեղից. —նա ձեռքը մեկնեց դեպի ընդարձակ
հորիզոնը: —Յես գնացքով եմ յեկել, —ասում է
նա, —մենակ եմ: Յես այստեղ իջա, վորովհե-
տեվ կոնդուկտորն ինձ հայտնեց, վոր իմ
տոմսն այլևս սխտանի չէ: Նա կասկածով նա-
յեց Չոն Տոմին:

— Իրազ եմ գալիս, վոր դուք հնդիկ չեք:
Դուք խոսում եք բոլորովին վոչ այնպես, ինչ-
պես պետք է խոսեն հնդիկները: Դուք արտա-
քուստ եք նման նրանց, բայց բոլոր հնդիկնե-
րը ձեզ կարող են ասել. «Մեռի՛ր, սպիտակա-
մորթ»: Կարող եմ յերաշխսավորել, վոր դուք
այն կեղծ հնդիկներից մեկն եք, վորոնք փո-
ղոցներում դեղ են վաճառում: Յես մի անգամ
այդպիսի մեկին տեսել եմ Կուինսում:

Անհրաժեշտ չե, վոր դու գուշակես, թե ով
եմ յես. իսկական հնդիկ թե նկարված պատ-
կեր... Բայց քեզ ի՞նչ անենք—ասա հարցը,
վորը «խորհրդից» պահանջում է լուծում...
Դու փախել ես տնից: Դու հանդիպել ես ար-
կածների: Դու չկարողացար արժանավոր կեր-
պով կատարել վրիժառու տղայի դերը,
պատրաստվել եյիր գնդակահարել խաղաղա-
սեր հնդիկին: Դու չհասցրիր գոնե ասել, ինչ-
պես հարկն է, «Մեռի՛ր, կարմրամորթ շուն:
Դու շատ հաճախ ես խանգարում իմ ճանա-
պարհ գնալուն»: Դե, ի՞նչ ես կարծում դու
այս բոլորի մասին:

Տղան մի րոպե սկսեց մտածել:

— Յես կարծում եմ, վոր սխալ եմ գոր-
ծել,—ասաց նա:—Յես պետք է գնայի ավելի
հեռու, դեպի արևմուտք: Այնտեղ կանյոննե-
րում յերևի դեռ կան իսկական վայրենիներ:

Յեվ փոքրիկ անզգամը ձեռքը մեկնեց
Ջոն Տոմին:

— Խնդրում եմ, ներեցեք ինձ, սրբ, վոր



յես կրակեցի ձեզ վրա: Հույս ունեմ, վոր ձեզ աշնքան ել մեծ ցամ չեմ պատճառել: Բայց ճիշտ վոր դուք պետք է ավելի զգուշ լինեք, վորովհետև գիտեք, յերբ սպիտակ հետախույզը հնգիկին տեսնում է գինվորական հագուստով, նրա հրացանը պետք է գործի անցնի:

Այստեղ Ձոն Տոմն սկսեց բարձր ծիծաղել և կռանալով վերցրեց տղային ու բարձրացրեց նրան: Հետո նա տղային նստեցնում է իր սեռին, իսկ փախստականը խաղում է նրա մորթով և արծվի փետուրներով՝ լցված հպարտ ուրախությամբ, այն ուրախությամբ, վորն զգում է ամերիկացին, յերբ վոտքերով արորում է «ցածր ցեղին»:

Պարզ է, վոր Ձոն Տոմը և փոքրիկ տղան այդ ժամանակից բարեկամացան: Փոքրիկ տղան հաշտվեց և ծխեց ծխամորձը վայրենուհետ. նրա աչքերից յերևում էր, վոր նա արդեն յերազում էր ունենալ մի տոմագառուկ՝) և մի զույգ ծղնոտե մանկական վոտնամաններ:

Վերջապես մենք վրանում վայելում ենք պատրաստ ընթրիքը: Փոքրիկը մեզ վրա նայում է վորպես հմուտ քաջերի, վորոնք չափազանց չնչին դեր են կատարում գինվորական

1) Տոմագառուկ—գենք, դազանակի մի տեսակը, վորով հյուսիսամերիկյան հնդիկները ջարդում են իրենց թշնամիների գլուխը:

գործունեյության թատերաբեմում: Այն ժամանակ, յերբ նա նստած էր «Վոտ-դաս» դեղի արկղի վրա սեղանի առաջ, վորը հասնում էր նրա կզակին և ուտում էր բիֆշտեկս: Ձոն Տոմը հարցնում է նրա անունը:

— Ռոյ,—ասում է տղան, ծամելով և չփչփացնելով: Բայց յերբ հարցնում ենք նրա հասցեն և ազգանունը, նա գլուխը շարժում է:

— Յեթե յես հասցես ասեմ, դուք ինձ տուն կուղարկեք. յես ուզում եմ ձեզ մոտ մնալ: Ինձ դուր է գալիս այս ճամբարային կյանքը: Տանը, մեր բակում, ունեյինք սրա նման մի վրան—տղաների համար: Նրանք ինձ անվանում էյին Ռոյ-Պարմիլր Գայլ: Հենց այդ պես ել մնացել է իմ անունը: Տվեք ինձ, խընդրեմ մի կտոր միս ևս:

Ստիպված էյինք տղային թողնել մեզ մոտ: Մենք գիտեյինք, վոր մի տեղ նրա պատճառով իրարանցում է առաջացել, վոր մայրը, քեռի Գարրին, մորաքույր Ձենը և վոտիկանա պետը վորոնում են յերեխայի հետքերը: Բայց նա իր մասին այլևս վոչինչ չեր ուզում ասել մեզ: Նա մեր ձեռնարկությանը բավական շոշափելի ոգուտ տվեց, և յերկու որից հետո մենք արդեն գազտնի կերպով հույս ունեյինք, վոր յերեխայի հարազատները յերբեք չեն գտնվի: Յերբ կարմիր Փուրգոնում սկսվում էր գործարար որը, նա այնտեղ էր գնում և հպարտությամբ հագեցած տալիս էր միտեր Պիտերսին ամեն տեսակի շէր և զանազան ապրանքներ:

Մեկ անգամ Ձոն Տոմը հարցրեց փոքրիկին նրա հոր մասին:

— Յես հայր չունեմ,—պատասխանեց նա:—Նա փախավ և մեզ թողեց մենակ: Նրա պատճառով մայրիկը միշտ լաց է լինում: Լյուսի մորաքույրս ասում էր, վոր նա կորցրել էր իր կերպարանքը...

— Ի՞նչպես թե կերպարանքը,—հարցրինք մենք:

— Դե կերպարանքն ելի,—ասում է տղան: Ինչ—վոր կերպարանք... Ախ, հա՞, մարդկային կերպարանքը: Յես չգիտեմ դա ինչ բան է:

Ձոն Տոմը պնդում էր, վոր փոքրիկին անհրաժեշտ էր միշտ պահել մեզ մոտ, մեր կնիքը դնել նրա վրա, հաղցնել վորպես փոքրիկ զինվորական առաջնորդի, իսկ յես հակառակն էյի պնդում: Յես կարծում էյի, վոր մեկն ու մեկը կորցրել է այս տղային և անպայման կուղենար նրան գտնել: Անհրաժեշտ էր դիմել մի փոքր խորամանկության, իսկ հետո տեսնել, թե գուցե հաջողվում է ծանոթանալ նրա անձնական քարտին:

Յեվ այսպես, մեկ անգամ յերեկոյան, յես մոտենում եմ միտեր Ռոյին, վոր նստած էր խարույկին, և նայում նրան վոչնչացնող և արհամարհական հայացքով:

— Ծնիկենվիտցել,—ասում եմ յես,—ուզ դակի զգվելի յե. դա ինչ անուն է՝ Ծնիկենվիտցել, Փո՛ւ, չեյի ցանկանա Ծնիկենվիտցել լինել:

— Դա ի՞նչ բան է,—հարցնում է տղան, աչքերը չռելով ինձ վրա:

— Ծնիկենվիտցել... կրկնում եմ յես, ձգձգելով այս բառը:—Յես մի քիչ առաջ ձեր քաղաքից յեկած մի մարդու հանդիպեցի և նա ինձ ասաց ըս անունը: Յես բոլորովին չեմ գարմանում, վոր դու ամաչել ես ըս անունը տալ. Ծնիկենվիտցել... Ֆու:

— Դե, լսեցեք,—ասում է տղան ամբողջ մարմնով դողալով:—Ինձ բոլորովին ել այդպես չեն կանչում: Իմ ազգանունը Կոյներս է: Ի՞նչ եք ասում:

— Յեվ դա դեռ ամենազգվելին չե,—չարունակում եմ յես, շտապելով վոր նրա հուզմունքը չանցնի:—Մենք կարծում էյինք, թե դու լավ ընտանիքից ես: Մենք, այսինքն միտեր Փոքր Արջը՝ չիրոկիցիների առաջնորդը, վոր իրավունք ունի յուր վերնազգեստի վրա տասը պոչիկ կրել, և յես, վոր հարյուրավոր դոլարներ ունեմ ահա այս արկղում պահված,—մենք պետք է չափազանց զգույշ լի նենք մեզ ընկեր ընտրելիս: Իսկ այդ մարդն ինձ ասաց, վոր ըս տոհմն ապրում է մի ինչ վոր հին, անպետք նրբանցքում, վորտեղ նույնիսկ մայթեր ել չկան: Յեվ վոր այժեբը ձեզ հետ միասին մի սեղանից են ուտում:

Տղան արդեն պատրաստ էր լաց լինելու:

— Այդպիսի բաներ մի ասեք,—բղավեց նա:—Այդ մարդն ուղղակի չգիտե, թե ինչ է ոտում: Մենք ապրում ենք Կաղամախիների փողոցում: Յեվ բոլորովին ել այժ չունենք...
Սա ի՞նչ բան է...

— Կաղամախինների փողոց, —ասում եմ
յես հեզնանքով:—Կաղամախինների փողոց...
Ահա ընդ փողոց. հենց վոր անցնես մի յերկու
թաղ, կրննես ուղղակի առվի մեջ: Այդ ամ-
բողջ փողոցով կարելի յե մի մեխերով յերբ
փորրիկ տակառ գլորել միայն: Ե՛հ, լավ, այլ
ես չխոսենք այդ Կաղամախինների փողոցի
մասին:

— Այդ փողոցը... Ի՞նչ եք ասում, նա մի
քանի կիլոմետր յերկարութուն ունի, —գո-
սում է տղան:—Մեր տան համարն է ութ հաբ
յուր վաթսուն յերկու. մեր տնից դենը դեռ
կան ահագին քանակությամբ տներ: Իսկապես
ի՞նչ է պատահել ձեզ: Գուր ինձ տանջում եք
Ձե՛ք...

— Ե լավ, լավ, —ասում եմ յես, ինձ
թվում է, թե այդ մարդը սխալվել է: Գուցե
նա մի բոլորովին ուրիշ տղայի մասին է առել:

— Յեթե յես նրան պատահեմ, յես
կզգուշացնեմ նրան, վոր նա այլևս իզուր տեղը
սխալ տեղեկություններ չտա մարդկանց մա-
սին:

Ընթրիքից հետո յես գնում եմ քաղաք է
հեռագրում միսիս Կոյներսին՝ Կաղամախինե-
րի փողոց, № 862 Կուրնսի, Իլլինոյս նահանգ,
վոր տղան մեզ մոտ է, միանգամայն ապահով
դրության մեջ, վոր մենք կպահենք նրան մին-
չև ձեր հետագա կարգադրությունը:

Յերկու ժամից հետո ստացվում է պա-
տասխանը. — Պահել նրան ավելի ամուր, —
մայրը կգա հետևյալ գնացքով:



1-347192



Հետևյալ գնացքը տեղում պետք է լիներ մյուս որը յերեկոյան ժամը վեցին. մենք՝ Ջոն Տոմի հետ միասին փոքրիկին վերցրինք և կայարան գնացինք: Իայց դուք այնտեղ իզուր կփնտռեյիք ցեղի առաջնորդին՝ «Գոնի-Մոնե-Տու»: Իրա փոխարեն միտեր Փոքր Արջը հագել էր անգլո-սաքսոնական ցեղի հագուստ: Եա հագել էր փայլուն կոշիկներ, և նրա փողկապը կապված էր աննման: Յեթե չը լինեյին զեմքի թեթև դեղին գույնը, ցից կանգնած սև մազերը, դուք կարող եյիք նրան համարել քաղաքի սովորական բնակիչներէց մեկը, վորը բացարձակապես վոչ մի բանով ուրիշներէց չի տարբերվում:

Գնացքն ահա մոտենում է: Վոսկեփայլ մազերով, մոխրագույն հագուստով, ցածրահասակ կինը դուրս է թռչում վագոնից և արագութեամբ շուրջը նայում:

Վրիժառու սողան տեսնելով նրան, կոչում է.

— Մամա՛:

Մայրը ճչում է.

— Ո՛ր...

Յեվ նրանք գրկախառնվում են:

Չարհուրելի կաթմորամորթներն այժմ կաթող են դուրս գալիքէնց թագստատեղերից՝ հարթավայրերը, ուրդեն անտեղ վախենալու Ռոյ-Կարմիր Գայի Բարձրացից:

ՀՀ Ազգային գրադարան



NL0927841

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

193 $\frac{1}{3471}$



**Օ. ԳԵՐԻ
ԺՈՆ ԹՈՄ
ՄԱԿՅԱՆ ԿՈՎՈՐԿ
ԳԻՅ ՍՍՐ Արմենի**